

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ ԵՎ ՍՏ. ՈՍԿԱՆՅԱՆԸ

Բանասիր. գիտ. դոկտոր Ս. Կ. ԳԱՐՈՆՅԱՆ

XIX դարի 50—60-ական թթ. հայ մամուլի և հասարակական մտքի պատմության մեջ Միքայել Նալբանդյանի (1829—1866) և Ստեփան Ոսկանյանի (1825—1901) անունները հատուկ տեղ են գրավում: Նրանց եռանդուն հրապարակախոսական դործունեությունը,—առաջինը Մոսկվայում՝ «Հյուսիսափայլում» (1858—1864), երկրորդը Փարիզում՝ «Արևելք» (1855—1856) և «Արևմուտք» (1859, 1864—1865) հանդեսներում,— համոզական դեմոկրատական և ազգային-ազատագրական շարժման նոր վերելքին, որը և վերջի վերջո որոշեց նրանց աշխարհայեցությունն ու գրական ստեղծագործության բնույթը: Որպես հրապարակախոսների ու գրաքննադատների՝ արևելահայերի և արևմտահայերի կյանքի սոցիալ-քաղաքական բոլոր առանձնահատկություններով հանդերձ:

Մ. Նալբանդյանի և Ստ. Ոսկանյանի (Ոսկան) փոխհարաբերության հարցը մի անգամ չէ, որ արժանացել է հետադոտողների ուշադրությանը՝ ինչպես անցյալում, այնպես էլ հատկապես սովետական տարիներին (Ս. Հովհաննիսյան, Ա. Կարինյան, Գ. Ստեփանյան, Ա. Մակարյան, Հ. Ղազարյան և ուրիշներ): Հարցի օբյեկտիվ պարզաբանմանը շատ բանով նպաստել են վերջին տարիներին հրատարակված նոր նյութերն ու տեղեկությունները (Մ. Հակոբյան, Ս. Շտիկյան և ուրիշներ):

Երկու ժամանակակից հրապարակախոսների գաղափարական-ստեղծագործական կապերը ճիշտ ըմբռնելու համար անհրաժեշտ էր փաստեր կոտակել առավել քիչ ուսումնասիրված գործչի՝ Ոսկանյանի մասին, մանավանդ, որ անցյալում, պատմականության սկզբունքի խախտումով, փորձեր են արվել նրանից վանել Նալբանդյանին, նույնիսկ նրանց հակադրել միմյանց: Ըստ որում պարզունակ են ներկայացվել ժամանակաշրջանի բարգուժումն ու հակասությունները և ի վերջո չի պարզաբանվել գլխավորը՝ ի՞նչն է միավորել Նալբանդյանին ու Ոսկանյանին և ի՞նչն է նրանց բաժանել: Ահա թե ինչու հարկ է վերադառնալ այդ խնդրին՝ առանց նսեմացնելու այդ ուղղությամբ առաջներում արվածի նշանակությունը:

Նալբանդյանը լարված ուշադրություն էր հանդես բերում դեմոկրատական և ազատամիտ «Արևելք» և «Արևմուտք» հանդեսների խմբագրի նկատմամբ: Այսպես, «Կոմս էմմանուելի հիշատակարանի» 1859 թ. փետրվարի 14-ի՝ գրառումներում («Հյուսիսափայլ», 1859, № 2) «Շահբեգ» ստորագրությամբ (Նալբանդյանի գրական դիմականերից մեկը) զետեղված է հետևյալ ազդր. «Լսում եմ, որ Փարիզում հրատարակվում է մի նոր ազգային օրագիր թե լրագիր Արևմուտք անունով, և թե Մոսկվայի մեջ, կամ գուցե բոլոր Ռուսաստանի մեջ, այդ օրագրի գործակալ պիտի անվանվի պ. Նալբանդյանցը: Ի՛նչ լավ կը լիներ, գո՛նե հնար կունենայի ես ևս ստանալու, ուրիշները ևս նույնպես. որում մտածում եմ, որ այդ գործը բավական արժանավոր բան լինի: Հրատարակողներից միներ պ. Հ. Ոսկան, ունի բանաստեղծական ճոխ քանքար»¹:

1 Մ. Նալբանդյան. ԵՎ. հ. 3, Երևան, 1932, էջ 132: Այսուհետև կատարվող մեջբերումների տեղը՝ հատորն ու էջերը, կնշվեն տեքստում: Մ. Նալբանդյանի ԵՎ-ի նոր հրատարակության (1979 թ. սկսած) հատորները նշվում են արաբական թվանշաններով, իսկ հին հրատարակության հատորները (1940—1949)՝ հռոմեականով:

«Արևմուտքի» խմբագրությունն արտատպելով Նալբանդյանի «Հիշատակարանի» այդ հատվածը՝ կցել է հետևյալ ուղղումը. «Շնորհակալ ենք մեծապես Հյուսիսսահալին արգո և գիտուն հրատարակողներին, բայց կաղաչենք, որ հաճին աղգ անել, թե Արևմուտքին մինակ շարագիրն է պ. Ս. Ոսկանյանը իր միրքի և ոչ պ. Հ. Ոսկան»²:

Ստ. Ոսկանյանի եղբայրներից մեկը մամուլում հրատարակած իր նյութերի ու թարգմանությունների տակ ստորագրում էր «Հ. Ոսկան»: Ուստի և պատահական չէ, որ Նալբանդյանը «Հ. Ոսկանին» համարեց «Արևմուտքի» հրատարակչներից մեկը. հանդեսը նոր էր սկսել հրատարակվել, և Նալբանդյանը դեռևս չէր կարող իմանալ բոլոր նորությունները: Նույնիսկ հարյուր սալի անց հետադուրդները, ուղղելով Նալբանդյանի վրիպումը, անճշտություն են թույլ տվել: Այսպես, Աշ. Հովհաննիսյանը, մեկնաբանելով «Արևմուտքի» հրատարակման մասին «Հյուսիսսահալի» հաղորդումը, գրել է, թե Նալբանդյանը «շփոթում էր նրա խմբագրին գրականագետ Հակոբ Ոսկանի հետ»³, նկատի ունենալով Ստ. Ոսկանյանի ավագ եղբոր անուն-ազգանունը կոռոջ մի այլ Հակոբ Ոսկանի, որ գործում էր Կ. Պոլսում:

Անհրաժեշտ է մի ավել ճշգրտում կատարել: Բնութագրելով «Արևմուտքի» խմբագրին, Նալբանդյանն ասում է, որ նա «ունի բանաստեղծական ճոխ քանրար»: Ոմանք «բանաստեղծական» հասկացությունը ընկալել են բառացիորեն: Մ. Հակոբյանն իրավացիորեն նկատում է, որ Ստ. Ոսկանյանի ստեղծագործությունն ուսումնասիրողները թերազնահատել են նրա պոեզիան, և բերելով Նալբանդյանի արտահայտությունը, գրում է. «Իհարկե, Ոսկանյան-բանաստեղծը, հակառակ Մ. Նալբանդյանի, եթե ուղիղ իմաստով հասկանանք, չափալանցված կարծիքի... անհամեմատ թույլ է, քան հրապարակախոս, նույնիսկ արձակ ստեղծագործող Ոսկանյանը»⁴:

Բանն այն է, որ Նալբանդյանն իր շատ աշխատություններում «բանաստեղծություն» բառի տակ հասկանում էր գեղարվեստական ստեղծագործություն՝ լայն իմաստով: Ըստ այդմ նա գործածել է Բելինսկու գեղագիտական տերմինը (մասնավորապես նրա «Պոեզիայի բաժանումն ըստ սեռերի ու տեսակների» հոդվածից)⁵: «Յաղագս հայկական մատենագրության ճառում» Նալբանդյանն ասում էր, որ «Հայք Ռուսաստանի առեալ ի ձեռին զառապալափութիւնս և առ հասարակ բանաստեղծութիւնս հեղինակաց Ռուսաց, որպիսիք են Պուշկին, Ժուկովսկի, Լերմոնտով, Գոգոլ և այլն, սքանչանան և հրճուիւն դճաշակ առեալ քաղցրութեան լեզուին...» (հ. 2, էջ 56): Ինչպես տեսնում ենք, Նալբանդյանը քաղցրութեան սահմանադատում էր «տաղաչափություն» — պոեզիա հասկացությունը՝ նեղ իմաստով և «բանաստեղծություն» հասկացությունը՝ լայն նշանակությամբ (ղրականություն, գեղարվեստական խոսք, գործ և այլն): «Ճառի» մի այլ հատվածում, Բելինսկու ոգով ձևակերպելով արվեստի (ղրականության) և իրականության մասին սկզբունքային դրույթը, գրութնադատը նկատել է, որ «ըստ մեզ, սապէս ըստ լուսաւոր կարծեաց այլոց, աղբիւր բանաստեղծութեան ճանաչէ քաղաքական կեանքն աղգի...» (հ. 2, էջ 55): «Հիշատակարանում» («Հյուսիսսահալ» 1859, № 9) Նալբանդյանը Շեքսպիրին անվանում է «բանաստեղծական մեծ կախարդ» (հ. 3, էջ 145): Ամսագրի նույն համարում ն. Աբովյանի «Վերք Հայաստանի» մասին հատվածում (որին մենք կվերադառնանք) գրել է, որ այդ «գործը է աղգային բանաստեղծու-

² «Արևմուտք». 15 մայիսի 1859, № 10, էջ 80:

³ Աշոտ Հովհաննիսյան. Նալբանդյանը և նրա ժամանակը. դիրք 1, Երևան, 1955, էջ 318:

⁴ Մ. Ն. Հակոբյան. Ստեփան Ոսկանի... հետքերով.— ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1970, № 2, էջ 50—51:

⁵ См. С. Даронян. М. Налбандян и русские революционные демократы. М., 1979, с. 57.

բյան մի հարազատ գաղափար» (հ. 1, էջ 311: Բոլոր ընդգծումները մերն են—Ս. Դ.):

Այսպիսով, Նալբանդյանի արտահայտությունը, որ «Արևմուտքի» հրատարակիչը «ունի բանաստեղծական ճոխ քանքար», հարկավոր է կարգալ «ստեղծագործական ճոխ քանքար»: Նալբանդյանը խոսում է ոչ թե նրա բանաստեղծությունների, այլ առհասարակ ստեղծագործության և ամենից առաջ՝ հրապարակաստության մասին, որը Նալբանդյանի և Ոսկանյանի մերձեցման վճռական գործոնն էր: Եվ Աշ. Հովհաննիսյանը լիովին իրավացի է, երբ նկատում է. «Մինչև Նալբանդյանի բեմելը ոչ մեկը հայ հրապարակախոսներից պայքարի դաշտ չէր իջել Ոսկանյանի մարտական շոինգով: Ոչ ոք դրանցից չէր բանեցրել տիրող հեղինակությունների և գաղափարախոսության դեմ «Արևելքի» և «Արևմուտքի» խմբագրի սուր գրիչը»⁶:

Եվ այսպես, «Հյուսիսսփայլի» գլխավոր աշխատակիցը ի լուր ամենքի հայտարարեց իր համակրանքի մասին «Արևմուտքի» խմբագրի անձնավորության նկատմամբ՝ բարձր գնահատելով նրա «ճոխ քանքարը» իբրև հրապարակախոսի:

1859 թ. մարտի 24-ին Նալբանդյանը Վարշավայի վրայով մեկնեց արտասահման: Նույն օրն էլ նրա հակառակորդներից մեկը՝ Մսեր Մսերյանը գրեց իր օրագրում. «Ելն Նալբանդեանի ի Մոսկուայ և չուրիս դեպի Փարիզ»⁷: Մարտի 31-ին Նալբանդյանը նորնախիջևանցի իր մտերիմ Գրիգոր Սալթիկյանին հայտնեց, որ «մինչև իմ հասցես կարողանամ ուղարկել, եթե կամենաս ինձ նամակ գրել, ուղարկիր պ. Նազարյանցին, նա Արևմուտքի հրատարակողի ձեռքով ինձ կհասուցանե» (հ. IV, էջ 61: Ընդգծումը մերն է—Ս. Դ.): Դատելով այդ նամակից, «Արևմուտքի» և «Հյուսիսսփայլի» հրատարակիչների միջև կապ էր հաստատված, և Ստ. Ոսկանյանն այն անձնավորությունն էր, որին Մ. Նալբանդյանը լիովին վստահում էր:

1859 թ. սկզբներին «Հյուսիսսփայլը» փակվելու վտանգի տակ էր: Ստեղծված բարդ իրադրության մեջ Նալբանդյանը մտածում էր ամսագրի հրատարակությունը փոխադրել արտասահման, որտեղ նա միտք ուներ Ոսկանյանի «Արևմուտքի» և Գերցենի ու Օգարևի «Կոլոկոլի» տիպի ազատ պարբերական օրգան հիմնել: Ահա ինչու Փարիզն ու Լոնդոնը Նալբանդյանի արտասահմանյան այդ ճանապարհորդության կարևորագույն հանգույցներն էին: Գրիգոր Սալթիկյանին Փարիզից ապրիլի 23-ին (մայիսի 5-ին) գրած նամակում նա հայտնում է. «Ահա գտնվում եմ Փարիզում և էգուց դուրս կգամ դեպի Լոնդոն... Չգիտեմ, թե ի՞նչ վիճակի մեջ է Հյուսիսսփայլը... Ես հույս ունիմ, որ դուք բոլոր մեծ ճշմարտասեր և ազնվամիտ հայրենակիցք և բարեկամք ինձ օգնական և ձեռնտու կլինիք, եթե Մոսկվա փակվի Հյուսիսսփայլը, նորից ուրիշ տեղ... վերանորոգելու և բոլոր մեր գլխից և ձեռքից, այլև ազգի և եկեղեցու գլխից անցածները ճշմարտության մեջ հրատարակելու համար» (հ. IV, էջ 62: Ընդգծումը մերն է—Ս. Դ.):

Նալբանդյանն այդ հարցում մեծ հույսեր էր կապում հայտնի տպագրիչ Զանիկ Արամյանի հետ, որի փարիզյան տպարանում տպագրվել են Ոսկանյանի «Արևմուտքը», իսկ հետագայում Նալբանդյանի «Երկու տող» (1861) և «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» (1862) երկերը: «Հիշատակարանի», ալսպես ասած, «փարիզյան» գրառումներում («Հյուսիսսփայլ», 1859, № 9) Նալբանդյանը, ողջունելով Ճ. Արամյանի հրատարակչական գործունեությունը, նկատում է. «Ազատ գրաստությունը մեծ քայլափոխ է դեպի հառաջադիմություն. և ամենայն մարդ, որ կարող էր որևիցե կերպով, ընթացք տալ ազատության, արժանի՝ և արժանի՝ է մեծ շնորհակալության» (հ. 3, էջ 165): Եվ երբ Նալբանդյանի մտադրությունը՝ Փարիզում հիմնել ազատ հրա-

⁶ Աշ. Հովհաննիսյան. նշվ. աշխ., գ. 1, էջ 312:

⁷ Մ. Նալբանդյան. Անտիպ երկեր, խմբագրություն և կոմենտարներ Աշոտ Հովհաննիսյանի. Երևան—Մոսկվա, 1935, էջ 368:

ատարակություն, հաջողությամբ չպսակվեց⁸, նա հայացքն ուղղեց «լոնդոնյան վտարանդիներին»՝ «Կոլոկոլի» հրատարակիչներ Գերցենին ու Օգարինին։

Հաղորդելով Ֆրանսիայի մայրաքաղաքում իր ունեցած հանդիպումներից ստացած տպավորությունները, Նալբանդյանը տալիս է Ստ. Ոսկանյանի գործունեության ընդարձակ բնութագիրը՝ որպես խմբագրի, հրապարակախոսի և մտածողի։ Ըստ այդմ նկատելի է Նալբանդյանի լավատեղյակությունը «Արևմուտքի» խմբագրի բոլոր գործերին և գաղափարական այն սուր պայքարին, որ բոլորովին է նրա շուրջն այդ ժամանակաշրջանում։ Բերենք «Հիշատակարանի» այդ հատվածը. «Շատ փոքր է Փարիզում գտնված հայերի թիվը, բայց այս փոքրի մեջ երևում է ազգայնությունը ավելի շատ, քան թե այլ բազմահալ քաղաքներում, ուր շատ անգամ ձգել է մեղ բախտը։ Փարիզում գտնվում է Բենֆարսի պ. Ս. Ոսկանյան ուսումնական ազգայինը, որ քանի մի ժամանակ սորանից հառաջ հրատարակելով Արևելք անուն օրագիր (խափանված մի էակ ճիզվիթի դարանագործությամբ, ամոթ և խայտառակություն այդ սևահոգի անպիտանին), այժմ հրատարակում է Արևմուտք անունով կիսամասդիրը...

...Մեք դիտենք մի ազատախոս հեղինակի վիճակը անկիրթ ազգի մեջ. այդպիսի հեղինակը ոչ թե միայն պիտի կուրծք մաշե, աչքի լույսը թափե աղվին նոր գաղափարը տալու համար, այլև պիտի տանի այն սև սև բամբասանքին, որ անխորհուրդ խավաբասե՛րք անշուշտ ուղղելու էին մի այդպիսի հեղինակի վերա։ Ասիացին չէ կարող մերկանդամ տեսանել ճշմարտությունը. իդիսը պիտի բողոք ծածկվի միշտ եզրպատացու աչքից. այս պատճառով ևս տեսանում ենք դանազան խլրտմունք և թշնամական հարձակմունք Արևմուտքի թե՛ հիմնադրերի և թե՛ շարագրողի ջանքը և աշխատանքը ունայնացնելու համար։ Չդիտենք, թե մինչև ե՛րբ պիտի հարատևե հայ-ճիզվիթների ազդեցությունը մեր ազգի վերա... Ո՛հ, օրերով, ամիսներով և տարիներով ողբալու նյութ։

Մեր մի առանձին հոգվածով մասնավորապես կխոսենք Արևմուտքի վերա և մի երկու բան մեջ կբերենք Արևմուտքից այդ հոգվածի մեջ, մեր ընթերցողներին մի փոքր ճաշակ տալու համար։ Այժմ այսքան թող հերիք լինի ծանուցանել, որ այդ օրագիրը հրատարակվում է ամիսը երկու անգամ. յուրաքանչյուր համար բաղկանում է մի քառածալ թերթից, տարեկան գինը Փարիզում է հինգ մանեթ, Մոսկվայի մեջ վեց մանեթ, իսկ Ռուսիայի այլ քաղաքների համար յոթն և կես մանեթ։ Ցանկացողը ստանալ այս օրագիրը կարող են յուրյանց խնդիրը պատկանյալ արժաթով հանդերձ հասուցանել կամ պ. Նալբանդյանցին կամ պ. Նալբանդյանցին։ Հյուսիսափայլը հանձնառու է Արևմուտքի գործակալությունը Ռուսիայի մեջ։

Արևմուտքի աղնիվ հրատարակողը և հիմնադիրը թող հաճին ընդունել մեր առ ի սրտե հրապարակական շնորհակալությունը, որոնց ցանկանում ենք նույնպես ամենայն հաջողություն և հառաջադիմություն» (հ. 3, էջ 165—166։ Ընդծումները մերն են—Մ. Դ.)։

Մեկնաբանենք այդ հատվածը։ Ինքնըստինքյան հասկանալի է. «Արևելքի» և «Արևմուտքի» հրատարակության և նրանց շուրջը ծավալված բանավեճի մասին Ս. Նալբանդյանը գիտեր ավելի վաղ։ Բայց սուր պայքարի դրդապատճառը և թե ո՞վքեր են կանգնած նրա ետևում նա կարող էր առավել մանրամասն իմանալ Ոսկանյանի հետ ունեցած, իրար նկատմամբ փոխադարձ սրբատաբանությամբ համակված անձնական զրույցներից, որ հասաստել է նրանց հոգեկան ու գաղափարական հարազատությունը։ Նշենք, որ Նալբանդյանն իր կարծիք բնավորությամբ և սկզբունքայնությամբ շատ դժվար էր մարդկանց

⁸ Աշ. Հովհաննիսյանը, ոչ առանց հիմքի, գտնում է, որ «Արամյանը նահանջ էր կատարում ազատ գրատպության սկզբունքից», որով և պայմանավորում է «Արևմուտքի» դադարումը 1859-ին (տե՛ս նշվ. աշխ., գ. 1, էջ 314)։ Ըստ երևույթին նա չհամարձակվեց խառնվել արևելահայերի հրատարակչական գործերին։

հետ մտերմանում և գործիչներին գնահատելիս նախ և առաջ ելնում էր նրանց քաղաքական համոզմունքներին:

Ցասումով դատապարտելով այն «ճիզվիտներին» և «խավարասերներին», որոնք հալածանքի էին ենթարկում «Արևելքի» ու «Արևմուտքի» հրատարակիչին, և խոսելով այնօրյա հայ իրականության մեջ «ազատախոս» գրողի ճակատագրի մասին, Նալբանդյանը նկատի ուներ ոչ միայն Ոսկանյանին, այլև ինքն իրեն և «Հյուսիսափայլ» ամսագիրը, որի զխավերում թանձրացել էին սև ամպերը: Եվ ահա նա Փարիզում մտերմանում է Ոսկանյանի՝ մի «ազատախոս հեղինակի» հետ, որի ճակատագիրը նույնն էր, ինչ որ իրենը: Նալբանդյանը անարգանքի սյունին դամբելով «Արևելքը» և «Արևմուտքը» հալածողներին, միաժամանակ ձգելով էր նաև նրանց, ովքեր հետապնդում ու հալածում էին «Հյուսիսափայլը»՝ և նրա հրատարակիչներին: Ավելի համոզիչ լինելու և զեղարկեստական պատկերավորության համար Նալբանդյանը, իրեն հատուկ գրելաոճով, դիմում է փոխաբերության, օգտագործելով հին եգիպտական դիցուհու, ճնշվողների պաշտպան Իզիսի կերպարը՝ հիշեցնելով նրա տառապանքներն ու տանջանքները, նրա պայքարը չարի դեմ՝ հանուն կյանքի: Պատահական չէ, որ հենց «փարիզյան» գրառումները, Ստ. Ոսկանյանի գործունեության բնութագրությունից հետո, ավարտվում են հեղափոխական պաթոսով ներծծված հանրահայտ «Ազատություն» («Ազատ աստվածն այն օրից...») բանաստեղծությամբ:

Ստ. Ոսկանյանի և Ս. Նալբանդյանի փոխմբբնողությունն ու համերաշխությունն ամրապնդվում էին նաև նրանով, որ նրանք այդ ժամանակամիջոցում պայքարում էին ընդհանուր գաղափարական հակառակորդների, մասնավորապես արքեպիսկոպոս Գաբրիել Ալվազյանի (Ալվազովսկու) դեմ, որը խստորեն մերկացվում էր ինչպես «Արևմուտքի», այնպես էլ «Հյուսիսափայլի» էջերում:

1858 թ. վերջին Նալբանդյանը «Հյուսիսափայլում» (№ 11) լույս է բնծալում «Նամակ առ հրատարակողը», որտեղ հրապարակվել են նոր նախիջևանի քաղաքագլուխ Հ. Խալիբյանի, հոգևորական բարձրաստիճան տարբեր անձնավորությունների, նրանց թվում նաև 1857 թ. Փարիզից Ռուսաստան վերադարձած ու նոր նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ նշանակված Գ. Այվազովսկու զանազան խարդախությունների, Նալբանդյանը մեղադրում էր ոչ միայն իր մերկացրած խարդախությունների անմիջական մասնակիցներին, այլև ամբողջ հասարակարգը, որ ծնում է նման շարաշահումներ: Կանխատեսելով իր «Նամակի» հնարավոր հետևանքները, Նալբանդյանը նկատել է. «Գիտեմ, դարձյալ պիտի բամբասվիմ այս նամակիս պատճառով մի քանի պարոնների կողմից, բայց գո՛նե և շատերի սրտից լսելու եմ ձայնակցություն, որ միակ մխիթարություն է մնացել մեր համար» (հ. 2, էջ 325):

Նալբանդյանը չի սխալվել ո՛չ մեկ և ո՛չ էլ մյուս դեպքում: «Հյուսիսափայլի» ընթերցողները դեռ չէին հասցրել ծանոթանալ նրա պամֆլետին, երբ արքեպիսկոպոս, Թեոդոսիայի «Մասյաց աղային» ամսագրի խմբագիր Գ. Այվազովսկին 1858 թ. դեկտեմբերի 7-ին Ներքին գործոց մինիստր Ս. Ս. Լանսկոյին գրում է բողոք, որտեղ առաջարկում է արգելել «Հյուսիսափայլի» հրատարակությունը, իսկ Նալբանդյանին՝ «որպես վնասակար ու անհանգիստ մարդ՝ ենթարկել արժանի պատժի, օրենքի ամբողջ խստությամբ» (հ. II, էջ 428, 429):

«Փարիզյան» գրառումներում խոսելով «մի հայ ճիզվիթի դարանագործություն» մասին, Նալբանդյանը, անշուշտ, նկատի ուներ Գ. Այվազովսկուն, որ խառն էր Ս. Ոսկանյանի «Արևելքի» խափանման գործում: Հնարավորություն չունենալով նրա իսկական անունը տալու, որովհետև ամսագիրը հենց Գ. Այվազովսկու լրտեսագրի հիման վրա գտնվում էր III բաժանմունքի խիստ հսկողության ներքո, և ձգտելով Ստ. Նալբանդյանին զերծ պահել նոր հարձա-

՝ Տե՛ս նաև՝ Մ. Ի. Բալայի Նալբանդյանի Վալերադերի ժողովածու, տեքստը պատրաստեցին է. Ժանթադրեյին Ա. Ինճիկյանը և Գր. Հարությունյանը. Նրևան, 1956, էջ 93—95:

կումներին, Նալբանդյանը բավարարվել է թափանցիկ անհարկով («ճիզ-վիթ»)՝ իմանալով, որ Գ. Ալվադովսկին մինչև 1855 թ. կաթոլիկ էր, որից հետո կրկին ընդունել է լուսավորչական դավանանք։ Դրա փոխարեն մեջբերված նա-մակում, որ 1858 թ. ապրիլի 23-ին Փարիզից ուղարկվել է Գր. Սալթիկյանին, նա ուղղակի խոսում է նրա մասին. «Ալվադը այս կողմերը խայտառակված է և Արևմուտք անուն օրագիրը սաստիկ խայտառակում է նրան, ես այդ օրա-գրից ասացի հրատարակողին ուղարկել մի քանի օրինակ պ. Նալբանդյանին, ի՞նչ ցնցողորն թողու...»։ Ապա, գանգատվելով իր դառն ճակատագրից, Նալ-բանդյանը ավելացնում է. «Աղաչում եմ եղբայր, շնորհակալ ի՛նչ այս օտարու-թյան մեջ, շնորհակալ, որ ես այս բոլորը քաշում եմ անգի համառ մեր դժոխքի սպասավոր ճիզվիթ հոգևորականներից, որոնց վերջին ջանքն է աղբը կուրաց-նելով վայելել նորա բարիքը» (Հ. IV, էջ 62—63)։ Ընդգծումը մերն է— Ս. Օ.)։ Նալբանդյանի արտահայտման մեկնելուց քիչ առաջ «Արևմուտքում» 1859 թ. հրատարակվել էին սուր երգիծական մի շարք նյութեր «Ալվազին» (Գ. Ալվադովսկու) դեմ. «Գաբրիկ» բանաստեղծությունը (№ 3), «Ի՛նչ կըլլա եղեր» (№ 4) և «Մոլի Լուանդ» (№ 5—6) պամֆլետները, «Հավելված» (№ 4, 6) հոդվածը և այլն։ Դրանց ընթերցումն այնքան խոր տպավորություն է թողել Նալբանդյանի հիշողության մեջ, որ արձագանք է գտել նրա սեփական ստեղ-ծագործություններում, որոնցում մերկացվում է Գ. Ալվադովսկին։ Այսպես, «Երկու տող» պամֆլետում Նալբանդյանը բերում է Գ. Ալվադովսկու վեց նա-մակը՝ գրված 1848—1849 թթ. և հասցեագրված Մխիթարյան միաբանության արքային՝ Փարիզի Մուրատյան վարժարանի տեսուչ Սարգիս Թևոդորյանին վարկաբեկելու և նրա տեղը զրավելու նպատակով, որը և Գ. Ալվադովսկուն հաջողվել է։ Այդ նամակները հայտնի էին Ստ. Ոսկանյանին։ Մի առիթով նա գրել է. «Պ. Գ. Ալվադովսքին ավելի լավ կըներ Սարգիս վարդապետին դեմ գրած սոսկալի զրպարտությունները հիշել և լռել»¹⁰։ «Հավելվածում» Ոսկան-յանը ծաղրում է Ալվադովսկուն այն բանի համար, որ հաճախ է փոխում իր համատարր, թեև երբևից է՝ «Մինչև ի մահ կաթոլիկ պիտի մնամ»¹¹։ Նալբանդ-յանն օգտագործում է այդ արտահայտությունը՝ պատռելով Ալվադովսկու կեղծ բարեպաշտական դիմակը. «Եվ ո՛վ է այս դատապարտողը, որ արդեն երկու անգամ փոխել է յուր կրո՞նք, ո՞ր տպագրությամբ հրատարակել է «Կա-թոլիկ ծնած եմ և կաթոլիկ պիտի մեռանիմ»...» (Հ. III, էջ 32)։

Գտնվելով Պետրոպոլիսյան բերդում, Նալբանդյանը գրում է սատիրա-կան «Կնդուկ պոչատի և նորա Սանչոյի մկրտությունը» բանաստեղծությունը, որտեղ ղեկավար չէ նկատել Ստ. Ոսկանյանի «Գաբրիկ» երգիծական բանաստեղ-ծության ազդեցությունը¹²։ Նրանցում ծաղրված է Գաբրիկ Ալվադովսկին՝ Ոս-կանյանի արտահայտությամբ՝ «Կնդուկ Գաբրիկ»¹³, իսկ Նալբանդյանի սա-տիրայում՝ «Կնդուկ պոչատ» («Պոչատ Գաբրիկ», Հ. 1, էջ 120, 390)։ Գ. Ալ-վադովսկին «Գաբրիկ» ոչնչացնող ծաղրանուն է ստացել նաև Նալբանդյանի «Կտոր մը ավազովսքիաբանություն» պամֆլետում¹⁴։

Ստ. Ոսկանյանի «Ի՛նչ կըլլա եղեր»¹⁵ պամֆլետի անդրադարձումը նկա-տելի է Նալբանդյանի «Հիշատակարանում»՝ «Պարոն Չերքեզյանցի հայհու-թյունը» («Հյուսիսսահյալ», 1860, № 6) հատվածում. Հովսեփ Չերքեզյանցը

¹⁰ «Արևմուտք». 15 փետրվարի 1859, № 4, էջ 30։

¹¹ Նույն տեղում, 15 մարտի 1859, № 6, էջ 45։

¹² Ինչպես պարզված է, Ոսկանյանի «Գաբրիկ» երգիծական բանաստեղծու-թյունը (1814) բանաստեղծության ազդեցությամբ, որն իր սուր կողմով ուղղված է կա-թոլիցիզմի ներկայացուցիչների դեմ։ 1848 թ. հեղափոխական տարում այն երգվում էր Փարի-զում, որի համար էլ Պիոս IX պապը բանադրեց Բերանժեին (տե՛ս Ս. Շտիկյան. Ոսկանյանի քաղաքական սատիրան.— «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, № 3, էջ 208)։

¹³ «Արևմուտք». 1 փետրվարի 1859, № 3, էջ 20—21։

¹⁴ «Մեղու». 5 դեկտեմբերի 1864։

¹⁵ «Արևմուտք». 15 փետրվարի 1859, № 4, էջ 25—27։

«Մեղու Հայաստանի» թերթում (1860, № 13) հրատարակել էր մի հոդված. որտեղ դժգոհում է «Հյուսիսսփայլի» քննադատական ոգուց, պաշտպանության տակ է առնում Գ. Այվազովսկուն և նրա համախոհներին: Այդ հոդվածի ահիւ նալբանդյանը բերում է «մասնավոր խոսակցությունը» («Ի՞նչ կըլլա եղեր» (հ. 3, էջ 201):

Ստ. Ոսկանյանի պամֆլետում, հիշենք, մի «ծերունի» երկու երիտասարդի հետ «ազգային վիճակի վրա» խոսելիս նրանց բոլոր փաստարկներին պատասխանում է միևնույն անհոգ ու սառը արտահայտությամբ. «Ի՞նչ կըլլա եղեր»: «Ազգային թշվառություն» հոդվածում («Հյուսիսսփայլ», 1864, № 3) նալբանդյանը, մերկացնելով Պոլսի ազգային սահմանադրական վարչության անհոգությունն ու անարբերությունը ժողովրդի հոգսերի նկատմամբ, օգտագործում է համանմանակ արտահայտությունը. «Ազգի աղջիկները և կանայքը կտառալին և կբռնաբարվին անօրինակ և անլուր ժպահություն... Մի քանի կին, մի քանի աղջիկ «կտառապին եղեր... Ի՞նչ կըլլա եղեր...» (հ. 111, էջ 108):

Գրականագետ Ա. Մակարյանն («Ի՞նչ կըլլա եղեր» պամֆլետի առթիվ դեռ 1955 թ. առաջ է քաշել հետաքրքրական վարկած՝ Մ. Նալբանդյանի և Ստ. Ոսկանյանի առաջին հանդիպման թվագրության շուրջը¹⁶: Նա գրում է, որ նրանց ծանոթությունը տեղի է ունեցել ոչ թե 1859 թ., ինչպես ընդունված է (տե՛ս հ. 3, էջ 394), այլ 1857-ին՝ Նալբանդյանի առաջին արտասահմանյան ուղևորության ժամանակ: Այդ ուղևորության մասին, մասնավորապես, խոսվում է Ռ. Գատկանյանի 1857 թ. հուլիսի 22-ի նամակում՝ հղված Ք. Պատկանյանին. «Նալբանդյանը գնաց արտասահման, և ինչպես լսեցի, օրագրի համար մամուլ, տպեր և դիշեններ պիտի բերե»¹⁷: Կան նաև այլ տեղեկություններ (Նալբանդյանի մտերիմներ Մ. Տեր-Գրիգորյանի, Մ. Մխանսարյանի, Ա. Խաչեզյանի վկայությունները), որ Նալբանդյանը 1857-ին մեկնել է արտասահման¹⁸: Այդ ուղևորության երթուղին կարող էր լինել Վիեննա—Փարիզ—Վենետիկ—Կ. Պոլիս, որտեղ կազմակերպված էր հայկական դատապարտություն, և Նալբանդյանը մեկնանքի հավանականությամբ Փարիզում 1857 թ. ծանոթացել է նաև «Արևմուտք» ապագա հրատարակիչ Ստ. Ոսկանյանի հետ: Ա. Մակարյանը գտնում է, որ Ստ. Ոսկանյանի «Ի՞նչ կըլլա եղեր» պամֆլետում նկարագրված իրադրությունը վերաբերում է 1857 թ., երբ Գ. Այվազովսկին մտադիր էր Փարիզից տեղափոխվել Ռուսաստան և Մ. Նալբանդյանին հովանավորող ու նրա մտերիմ Մ. Վեհապետյանի փոխարեն գրավել նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդի պաշտոնը: Պամֆլետում խոսվում է այն մասին, թե ինչպես երկու երիտասարդ (նրանց անունները չեն տրվում) գալիս են մի անձնավորության մոտ (նրա անունը ևս չի տրվում) և պաշտպանելով «բարեկամի մը» իրավունքը, ջանում են համոզել նրան հրաժարվելու իր մտադրությունից: Ըստ որում, պամֆլետի հեղինակը նկարագրում է այդ անանուն մարդկանց «գիմագիծը» և բնութագրում նրանց, որոնք իրոք, հիշեցնում են Ստ. Ոսկանյանին, Մ. Նալբանդյանին և Գ. Այվազովսկուն, իսկ գալի կարող պատահական դուգադիպություն լինել: Ավելին. երիտասարդների՝ «Ի՞նչ կըլլա եղեր» ստեղծատիպ արտահայտությունը կրկնող զրուցակցի դիմադծի նկարագրությունը շատ

¹⁶ Ա. Մակարյան. Մ. Նալբանդյանի և Ստ. Ոսկանյանի փոխհարաբերության հարցի շուրջը.—ՀՍՍՀ ԴԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1955, № 4, էջ 91—92:

¹⁷ Ռ. Պատկանյան. Եժ. հ. 5, Երևան, 1968, էջ 167:

¹⁸ Տե՛ս Ա. Մ. Ինճիկյան. Միքայել Նալբանդյանի կյանքի և դործունեության տարեգրությունը. 2-րդ հրատ. Երևան, 1980, էջ 323—324: Ա. շ. Հովհաննիսյան. Նշվ. աշխ., գ. 2, էջ 150—153: Ինչպես պարզվեց վերջերս, Նալբանդյանի արտասահմանյան առաջին (1857 թ.) ուղևորության փաստն ու երթուղին հաստատվում են «Մոսկվայի քաղաքային ոստիկանության տեղեկագրի» (1857, № 130) հայտարարությամբ. «Հայոց լեզվի ուսուցիչ Միքայել Լադարի Նալբանդովը, հասցեն՝ Նիկուսի տուն, մեկնել է արտասահման. հետևյալ երթուղով՝ Ավստրիա, Ֆրանսիա, Իտալիա, Թուրքիա» (տե՛ս Կարեն Ա. Միմ. նյան. Նալբանդյան կամ ազատության ասպետն ու նահատակը.—Սովետական գրականություն, 1982, № 11, էջ 63):

և հիշեցնում Մ. Նալբանդյանի «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսը» (1858—1859) պամֆլետի գործող անձերից մեկին, «որ ծառայում է Նորին մոսկովյան մոտ»։ «Երևակայեցեք ձեզ մի դեկլ... աքաղաղի քիթով, շան ճակատով, մեծ ականջով, կոտորներով, ճանկերով, ժանիքներով և երկայն պոչով...» (հ. 1, էջ 357)։ Համեմատենք «ծեր սատանայի» Ստ. Ոսկանյանի նկարագրությանը. «Ասիկա ծեր և շոր մարդ մ'է սպիտակ մազերով, այծի մորուրով, կապիկի ճակատով և արծիվի քիթով։ Գրեթե հիսուն տարեկան կա և այնքան ծակամուտ կյանք մը և մթին սովորություններ ունի, որ շատերը սովորեցնեն զինքը հեղնությամբ»¹⁹։

Հարցը լուծելու համար հետաքրքրական է Նալբանդյանի «փառիզյան» պրատումների մի հաղորդումը, որի վրա ուշադրություն չի դարձվել. «Պ. Մ. Ոսկանյանը վաճառում է յուր տպարանից թե մայրեր և թե ձուլյալ տառեր և յուր ղեկավար այդպիսի տառերի վաղուց հրատարակած է մի առանձին մեծ թերթի մեկը» (հ. 3, էջ 164)։ Ընդգծումը մերն է—Ս. Դ.)։ Հնարավոր է, որ հենց այդ «հայտարարության» հիման վրա էլ Նալբանդյանը 1857-ի ամռանը մեկնեց արտասահման, որի մասին հաղորդում է Ռ. Պատկանյանն իր հորեղբոր որդուն։ Այդ կապակցությամբ ևս կարող էր տեղի ունեցած լինել Նալբանդյանի առաջին հանդիպումը Ճ. Արամյանի և Ստ. Ոսկանյանի հետ, որոնց նա կարող էր դիմել նոր ամսագրի համար տառեր ձեռք բերելու հարցով, ինչպես նա, ամենայն հավանականությամբ, դա արել է 1859 թ. «Հյուսիսսահայլը» արտասահմանում հրատարակելու խնդրով։

Ստ. Ոսկանյանի հետ Նալբանդյանի առաջին հանդիպման հարցին տարիներ անց վերադարձել է Մ. Հակոբյանը՝ Ոսկանյանի մասին նոր արժեքավոր նյութեր հրատարակելու առիթով²⁰։ Սակայն նա կտրուկ ձևով մեռած է Մ. Մալբանդյանի առաջ քաշած վարկածը՝ ուշադրություն չդարձնելով 1857 թ. հուլիսին Նալբանդյանի արտասահման մեկնելու մասին ժամանակակիցների հաղորդած կակառ տեղեկություններին, որոնք հիմա հաստատվեցին։

Որն է Մ. Հակոբյանի փաստարկման հիմքը։ Զմյուռնիայի «Աշխատանք» թերթում (1910, № 1) առաջին անգամ հրատարակվել է Ստ. Ոսկանյանի պատասխան նամակը կաթողիկոս Մատթեոս Զուխաջյանին։ Նրանից հայտնի է դարձել, որ Նալբանդյանը Փարիզ է տարել կաթողիկոսի կոնդակը՝ ուղղված Ստ. Ոսկանյանին. Մատթեոս կաթողիկոսը «Արևմուտքի» հրատարակչին գիտե՞ր Զմյուռնիայից և պաշտպանում էր նրա պայքարն ընդդեմ Գ. Ալվադովսկու։ Նամակը չի թվագրված։ Վերահրատարակելով այդ մոռացված վավերաթիւրը, Մ. Հակոբյանը գտնում է, թե քանի որ նրանում Նալբանդյանի աղդանունը տրվում է առանց որևէ «ածականի» և նրա մասին ոչինչ չի ասվում («...սիրտ իմ յուսաբեկ լուեալ, դոր պատմէրն պ. Նալպանդեանց...»), ապա, գրում է Մ. Հակոբյանը, «տարօրինակ այս հանգամանքը հեշտ բացատրելի է, երբ հնարավոր ենք համարում, որ նամակաբերի հետ նա նոր չէր ծանոթանում, առաջուց գիտե՞ր նրան»։ Հաղիվ թե «ածականի» բացակայությունը բավականաչափ լուրջ հիմք է նման լուրջ հետևության համար, այն էլ չթվագրված նամակի հիման վրա։

Հետազայում Մ. Հակոբյանը ի հայտ բերեց «Արևմուտքի» 1865 թ. 10-րդ համարը, որտեղ հրապարակված է Մատթեոս կաթողիկոսի վերոհիշյալ կոնդակը, որ Ստ. Ոսկանյանին է հանձնել Մ. Նալբանդյանը։ Կոնդակը նույնպես չի թվագրված։ Բայց այս անգամ, իրոք, հեշտությամբ կարելի է պարզել, թե երբ է այն գրվել, և Մ. Հակոբյանը ճիշտ եզրակացություն է անում. կաթողիկոսի ուղերձը Ոսկանյանին տանելու համար կարող էր Նալբանդյանին հանձնելով լինել միայն 1860 թ. աշնանը, երբ Նալբանդյանը արտասահմանյան նոր ուղևորությունից առաջ եղել է էջմիածնում և հանդիպում ունեցել կաթո-

¹⁹ «Արևմուտք». 15 փետրվարի 1859, № 4, էջ 25։

²⁰ Մ. Ն. Հակոբյան. Ստեփան Ոսկանյանի... հետքերով, էջ 55—56։ Նույնի՝ «Արևմուտքի» նորահայտ համարը.—«Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 2, էջ 164—167։

դիկոսի հետ։ Ստանալով իր մտերիմին ուղղված կոնյակը, Մ. Նալբանդյանն այն հասցեատիրոջն է հանձնել Փարիզ ժամանելու օրերին (1861—1862)։ Կաթողիկոսի նամակից երևում է, որ Նալբանդյանը մինչև այդ, իսկապես, արդեն ահապահվել էր Ռսկանյանի հետ։ Ծիշտ է, Նալբանդյանի անունը այստեղ ծածկագրված է («Պ...»), քանի որ նա այդ ժամանակ գտնվում էր Պետրոպոլիսյան բերդում («Զոդջութենե ձերմե եւ զորպէսն կելոյ լուեալ մերի Պ... տեսեալ է զձեզ ի Բարիդ...»)։

Ի՞նչ հետևություն է հանգում Մ. Հակոբյանը՝ հենվելով, կրկնում եմ, այդ արժեքավոր նյութերի վրա։ Զափազանց անսպասելի։ Մ. Նալբանդյանը Ստ. Ռսկանյանին հանդիպել է ոչ թե 1857-ին, այլ 1859 թ.։ Բայց այդ վավերագրերը հավաստում են, որ երկու հանդիպում է կայացել՝ 1859-ին և 1861—62 թթ., բայց չեն լուծում առաջին հանդիպման հարցը։

Այս կամ այն դեպքում, երկու ականավոր հասարակական գործիչների ու հրապարակախոսների հանդիպումը, ինչպես ակնհայտ է, շուտով վերածվեց մտերմության ու համագործակցության, որովհետև նրանք երկուսն էլ կանգնած էին դեմոկրատական և լուսամտոական ընդհանուր սկզբունքների վրա և հոգեպես նախապատրաստված էին փոխադարձ շփումների ու համասեռ պայքարի համար՝ հանուն հայ ժողովրդի հասարակական առաջադիմության։

Վերոհիշյալ առումով կատարվող նոր որոնումները չափազանց հետաքրքրական փաստեր են երևան հանում։ Հենց վերջերս ուշադրություն դարձվեց Ստ. Ռսկանյանի «Արևմուտքի» 1859 թ. հուլիսյան համարում գետեղված մի հաղորդմանը, որտեղ խոսվում է այն մասին, որ իտալուհի «փափկասունը» թույլ մո իր ձեռքով բաներ է զրոշր, որ իր եղբոր հանձնվեր է»։ Ինչպես հայտնի է, Մ. Նալբանդյանը «Իտալացի աղջկա երգը 1859 թվականից» ստանչելի բանաստեղծության մեջ կերտված է ջեռմ հայրենասեր իտալուհու կերպարը։ Նա իր հյուսած զրոշր հանձնելով ազատագրական պատերազմի գնալող եղբորը, նրան կոչ է անում փրկել հայրենիքը։ Ավելին. Ստ. Ռսկանյանը հիշյալ հաղորդագրության մեջքերված ռոզն ուղեկցել է Եդիշեից քաղված ու իտալուհիների վերահասցեագրված ալպայի ծանոթագրությունը։ «Տիկնայր փափկասունը Իդալիո աշխարհին, ողբ զրգայլք և գգվյալք էին...»²¹։ Նալբանդյանն իր «Երգի» երկրորդ հատվածում մեծ ընդհանրացում կատարելով, հայրենասիրության ու ազատագրական պայքարի կոչ է հղում հայ ժողովրդին և դարձյալ դիմում Եդիշեին, հիշեցնում նրա «նկարագրած հայոց փափկասուն տիկնաց մասին (հ. 1, էջ 107—109)։ Թեև հառցը կարոտ է առավել խոր ուսումնասիրության, չի կարելի, սակայն, անտեսել այդ ուշագրավ դիտարկումը և նրանից արվող հավանական հետևությունը, որ Ռսկանյանի հաղորդումն ու ծանոթագրությունը կարող էին սկզբնաղբյուրի դեր կատարել Մ. Նալբանդյանի «Երգի» համար և ստեղծագործական մղում հաղորդել նրան²²։

«Արևմուտքի» ու «Հյուսիսափայլի» և նրանց աշխատակիցների փոխհարաբերությունը կարելի է համեմատել Գերգենի ու Օդարեի «Կուրկույի» և Չերնիշևսկու ու Դոբրոլյուբովի «Սուրճմեննիկի» հետ։ Հայկական դեմոկրատիան, ինչպես ռուսականը, իր գաղափարական պայքարում ակտիվորեն օգտագործել է լեզալ և գրաքննչական ենթակայության մամուլի ղանազան ձևերը, նրանք պաշտպանել են միմյանց։ Համագործակցության ցայտուն օրինակն է Ստ. Ռսկանյանի և Մ. Նալբանդյանի աշխատակցությունը։

Փարիզից Նալբանդյանի լոնդոն մեկնելուց անմիջապես հետո, «Արևմուտք», ողջունելով Մոսկվայում նոր ամսագրի հրատարակությունը, նշել է. «Հյուսիսափայլ անուն ամսատետր մ'առինք Մոսկվայեն և բերկրալիր տե-

21 «Արևմուտք». 1 հուլիսի 1859, № 13, էջ 104։

22 Այս հարցի առթիվ հետաքրքրական դիտողություններ են կատարված Մ. Հակոբյանի «Միբայել Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգի» սկզբնաղբյուրի շուրջը» հոդվածում («Սովետական գրականություն», 1978, № 2, էջ 145—149)։

աանք, որ միտքի ազատության և լուսավորության տեսիլները ասպարեզ մ'ու-
նին Ռուսիայի ազգայիններու մեջ... Այս մտական հարուխը բարի նշան է
և հավաստի ենք, որ իր արդյունքը չպիտի ունանա զղալի կերպով տարածվիլ
բոլոր ազգին վրա... Զարմանալի ենեույթ: Ուրկե՞սկ սկսավ մեր լուսավորու-
թյունը և ո՞ր կապովինի հիմա... Իզմիտի, Պոլիսի և ուրիշ քաղաքներու հայե-
րը պիտի ամչնան տեսնելով, որ Հյուսիսեն կը փայլի լույսը...»²³:

Նալբանդյանը դեռևս արտասահմանում էր գտնվում, երբ «Արևմուտքը»
«Հյուսիսափայլից» արտատպեց Նալբանդյանի «Նամակ առ հրատարակողը»
պամֆլետը²⁴, խմբագրական նախաբանում Ստ. Ոսկանյանը գրել է. «Հյուսի-
սափայլեն առնելով հոս կղենք երկար հոգված մը, որ մասնավոր ուշադրու-
թյան արժանի է և որ պ. Գ. Ալվազովսկին վարքին վրա նոր լույս մը կծավա-
լէ... Շնորհակալ ենք Հյուսիսափայլեն, որ այս վկայությունը բերավ մեզ: Հու-
սանք, թե ուրիշ վկաներ ևս չպիտի պակսին»:

Նալբանդյանի հոգվածի հրատարակությունն ազատամիտ Ոսկանյանի ու-
րույն բողոքն էր այն հալածանքների դեմ, որին ենթարկվում էր «Արևմուտքի»
Լեդայրակից «Հյուսիսափայլը»: Բայց գաղափարական հակառակորդները նը-
րանց հանդիսատ չէին տալիս: Գ. Ալվազովսկին 1859 թ. դեկտեմբերի 26-ի նա-
մակում (ֆրանսերեն լեզվով) գանգատվել է Եկատերինոսլավի գեներալ-նա-
հանգապետ կոմս Ա. Կ. Սիվերսին (իմա՝ «Արևմուտքի» — Ս. Դ.) խմբ-
բազիրը, որ զմյուռնացի մի հայ երիտասարդ է, Փարիզում և Արևմուտքում
ծանոթ իր ռեդիկուլյոն գաղափարներով, հունիսյան (1848 թ.) ռեդիկուլյոնայի
ժամանակ իր ձերբակալումով, իր խռովասեր նկարագրով, իր հակակրոնա-
կան... գաղափարներով, անցյալ ապրիլ ամսին Փարիզում բախտ ունեցավ
հանդիպելու պարոն Նալբանդյանի, որը հաղորդեց իր ոչ նվազ կործանարար
գաղափարները և ուրիշ փաստաթղթերի հետ նրան ներկայացրեց Նալբանդյանի
գեմ իր գրած և արդեն Նաղարչյանցի «Հյուսիսափայլում» հրատարակած այն
հոդվածը, որի մասին ես պարտք էի համարել պաշտոնապես հայտնել մի-
նիստությունը, և որն արտատպվեց «Արևմուտքում»: Պաբոն Լազարյանն իր
նամակներից մեկում ինձ արդեն հասկացրեց, որ այդ թերթը շոջում է Մոսկ-
վայի և Պետերբուրգի հայերի ձեռքում»²⁵:

Նալբանդյանի հոգվածի հրապարակումից հետո ուժեղացան հալածանք-
ներն «Արևմուտքի» դեմ՝ հատկապես Կ. Ղուսում հրատարակվող «Մասիսի»
կողմից: Թերթի հունիսի 25-ի համարում ոմն Թորոս մականվանյալ Ստ. Ոս-
կանյանին մեղադրեց այն բանում, որ նա Մ. Նալբանդյանի խոսքերով «վար-
կաբեկել» է Գ. Ալվազովսկուն, չ. Նալբանդյանին և ուրիշ «ազգասեր բարերար-
ներին»: «Արևմուտքում» Ստ. Ոսկանյանը հանդես եկավ «Քսանեչորս ստու-
թյուն» հայտնի հոգվածով (1859, № 17)՝ պաշտպանության տակ առնելով նաև
Ս. Նալբանդյանին: «Մասիսի» էջերում 1859 թ. սեպտեմբեր-նոյեմբերին, Թո-
րոսից հետո, «Արևմուտքի» դեմ երկարատև գրոհ է ծավալել հրապարակախոս
և «պուեռ» Նալառուր Միսաքյանը, որին Ս. Ոսկանյանը դեռևս մայիսին ծա-
նակել էր իր հանդեսում հրատարակած սատիրական բանաստեղծությամբ՝
«Սագ մը պուեռ» («Արևմուտք», 1859, № 10)²⁶:

«Արևմուտքի» շուրջը ծավալված պայքարում Նալբանդյանը կողմնակի
դիտողի դերում չէր: Այդ մասին է վկայում «Ծոցատեսերի նկատողությունե-
րում» արված նրա գրառումը: Այսպես, 1859 թ. մայիսի 27-ին (հունիսի 8) նա
Բրյուսելից ուղարկում է «Ոսկանյանին 2 նամակ՝ տպելու» (հ. IV, էջ 262):
Այդ նամակ-հոգվածները ինչ որ պատճառով կամ չեն հասել հասցեատիրոջը,
կամ չեն հրատարակվել մեկ անհայտ պատճառներով: «Գրելիք» բաժնում կա
նաև այսպիսի գրառում. «Մասիսը — Միսաքյանի հոգվածները» (հ. IV, էջ 275):

23 «Արևմուտք». 15 մայիսի 1859, № 10, էջ 79:

24 Նույն տեղում, 1 և 15 հունիսի 1859, № 11 և 12, էջ 32—35 և 90—92:

25 Ա. Մ. Ինճիկյան. նշվ. աշխ., էջ 118:

26 Հետագայում Ն. Միսաքյանի մասին գրել են Չ. Պարոնյանը («Ազգային ջոջեր»), Գր. Զոհրապը («Ծանոթ դեմքեր») և ուրիշներ:

Պարզ է. խոսքը վերաբերում է «Արևմուտքի» դեմ ուղղված Միսաքյանի հոդվածներին: Այդ գրառման կողքին հիշատակվում է «Մասյաց աղավնի» և «Ծիածան», որոնք հրատարակվում էին Թեոդոսիայում՝ Գ. Այվազովսկու խմբագրությամբ և հայտնի էին «Հյուսիսսփայլում» Նալբանդյանի հանդես գալու դեմ կատարած իրենց հարձակումներով: «Հիշատակարանի» ժԲ գլխուժ (Հյուսիսսփայլ, 1859, № 11) ակնարկելով այդ բանավեճը, Նալբանդյանը գրել է. «Հիշատակարանիս աչքերը բաց են և ականջները սո՛ւր...»: «Մի քանի թիթևամիտ օրագրերի և լրագրերի խելացնոր կարծիքներ և գաղափարք հասանում են մեր ականջին, բայց դոքա կոտրած զանգակի ձայնից ավելի չունին ուրիշ արժանավորություն: Մեք ծիծաղում ենք դոցա վերա, բայց այդ ծիծաղը արտասուքից դառն է մեր համար, ըստ որում այդ բաները գործվում են մեր ազգի մեջ» (հ. 3, էջ 170, 172):

Ինչպես տեսնում ենք և՛ Ոսկանյանը, և՛ Նալբանդյանն իրենց գաղափարական հակառակորդներին դեմ մղած պայքարում օգտվել են միևնույն ահեղ զենքից՝ ծիծաղից: Բայց դա ծիծաղ չէր հանուն ծիծաղի, այլ Գոգոլի խոսքերով ասած, դա «արցունքախառն ծիծաղ» էր: Իզուր չէր, որ այդ խոսքերը դարձել էին Գերցենի և Օգարնի «Կոլոկոլի» առաջին համարի (1 հուլիսի 1857 թ.) երգիծական բաժնի բնաբանը:

«Արևմուտքի» հակառակորդները չբավարարվեցին մամուլում հանդես գալով. նրանք դիմեցին նաև ծայրահեղ միջոցների՝ փաստորեն բոլկոտ հայտարարելով Ճ. Արամյանի տպարանին, որտեղ տպագրվում էր Ոսկանյանի հանդեսը: Այդ բանում հատկապես եռանդոտ գտնվեցին Ամբրոսիոս և Խորեն Գալֆայան եղբայրները՝ Գ. Այվազովսկու զինակիցները: Նրանք դադարեցրին Արամյանի տպարանում տպագրվող Ֆենելոնի «Տեղեմաք» երկի իրենց թարգմանությունը՝ պատճառաբանելով, «թե նամակ են ստացած Հնդկաստանից, որով գրում էին, թե մամոթ է վերապատվելի թարգմանիչներին բան տպել մի այնպիսի տպարանում, ուր տպվում էր Արևմուտքը»: Մեկնաբանելով այդ անհեթեթ հայտարարությունը, Նալբանդյանը շարունակում է. «Ահա մի նոր գաղափար հայերի ասիական թանձր պղտորամտությամբ. մինչև այս աստիճան մտքի և գաղափարի այլանդակություն. չգիտենք ի՞նչ մտածել: Մնում է մեղ միայն զարմանալ թե ի՞նչպես այդ այլանդակ և տմարդի գաղափար հղացողը կամ այդ խրատաբանության հետևողը ապրում են միևնույն արևի լույսի տակ, ի՞նչպես բնակվում են միևնույն մոլորակի վերա. անգոսնելի կիրք» (հ. 3, էջ 155):

«Հիշատակարանի» նույն գրառումներում Մ. Նալբանդյանը, Ստ. Ոսկանյանից անմիջապես հետո, սուր նետեր է ուղղում «Հավելվածի պատմություն վերագրածի...» (Փարիզ, 1858) բրոշյուրի դեմ: Նրա հեղինակներ Ս. Թեոդոսյանը, Գ. Այվազյանը, Ա. և Խ. Գալֆայանները բանը ներկայացնում էին այնպես, թե իրենք «այս օրուան չորս միլիոն ազգի մը երեսփոխանք են ճանչցուած Կաղզիի կայսերանիստ մայրաքաղաքին մեջ»: Բերելով փառամոլ վանականների այդ խոսքերը, Նալբանդյանը ավելացնում է. «Մինչ իսպառ բողոքում ենք այս ինքնակոչ երեսփոխանության ընդդեմ, Արևմուտքի հետ միասին» (հ. 3, էջ 155): Նալբանդյանը նկատի ունի մեր հիշատակած «Հավելված» հոդվածը, որտեղ Ստ. Ոսկանյանը գրել է. «Գալֆայան պ. Ամբրոսիոսը կրնա հայ եկեղեցվո երեսփոխան քարոզել զինքը... բայց բնավ երբեք երեսփոխան չորս միլիոն ազգի, որուն պատիվ կհամարինք անդամ սեպվիլ և զոր կսիրենք արչամբ չափ...»²⁷:

Այս կապակցությամբ ուշագրավ է «Հիշատակարանի» ժԲ գլխի վերջահատվածը, որտեղ Նալբանդյանը բերում է մի նամակ, որի բովանդակությամբ արձագանքում է «Հավելվածի» հեղինակի ծավալած քննադատությունը. «Քահանայի մինը, — գրում էր բարեկամս, — չգիտեմ ինչ կերպով ստանում է եղած Փարիզի Արևմուտք օրագիրը: Մի անգամ ներս է մտնում նորատուն մի աբեղա... Աբեղան տեսանելով, որ քահանան կարդում է մի բան,

27 «Արևմուտք». 15 մարտի 1859, № 6, էջ 47:

Հարցնում է, թե ի՞նչ էր կարդացածը: Քաջանան պատասխանում է «Արևմուտք օրագիր»:

— Դու ինչպե՞ս համարձակվում ես կարդալ այն բանը, որ ես նշովել եմ:

— Ի՛նչ նշովելու բան կա այստեղ. ճշմարտություն, մի՞թե դուք նշովում եք ճշմարտու...:

— Ձայնդ կտրիր,— ասելով դուռս է գնում աբեղան և պաշտոնական թըղթով դրկում է նորան յուր ծուխից և ուղարկում է մի այլ քաղաք, որի ժողովըրդի թե սակավությունը և թե աղքատությունը պատիժ պիտի համարվեր քահանային:

Խեղճ քաջանան հոգսից և նեղությունից հիվանդանում մեռնում է յուր արսորի մեջ»:

Մեր,— եղբայրակում է Մ. Նալբանդյանը,— շուտով մանրամասն կխոսենք Արևմուտքի մասին» (հ. 3, էջ 180—181):

Հավանաբար այլ գործերով զբաղված լինելով (Պետերբուրգի համալսարանում սովորելը, առաջիկա երկարատև ուղևորությունը Հնդկաստան և այլն), Նալբանդյանը չի գրել խոստացած հոդվածը, բայց շարունակել է հետաքրքրվել «Արևմուտքի» ճակատագրով: Պետերբուրգում 1859 թ. նոյեմբերի 2 (14)-ին «Երեսմյուսյակի նկատողություններում» նա այսպիսի նշում է կատարել. «Ոսկանյանցին (նամակ—Մ. Դ.) և բողոքը» (հ. IV, էջ 263): Այդ առթիվ է, որ «Արևմուտքում» հաղորդվեց. «Արևմուտքի ճշմարիտ հիմնադիրները պարտք կը համարին իրենց հասարակության իմացնել թե Ռուսիային երկու բողոքագիր րնդունած են աղատամիտ և ուսումնասեր ազգայիններն ստորագրելու: Արգո ստորագրողը կբողոքեն Արևմուտքի վրա Տաճկաստանի մեջ տարածված թըղթամական յուրերուն դեմ: Կցալինք, որ չպիտի կրնանք աս բողոքագիրները հրատարակել, որովհետև Արևմուտքը կղաղարի աս օրվրնե ետքը: Հոս մեր խորին շնորհակալությունը մասնացանելով Ռուսիայի մեր աղատասեր ազգայիններուն, կիմացենք որ երբեք մոռանալու չենք իրենց մեզի տված քաջալերությունը և համակրությունը»²⁸:

Այն բանում, որ Ռուսաստանից ստացված բողոքի հեղինակներից մեկը Լդել է Մ. Նալբանդյանը, կասկած լինել չի կարող. բայց ո՞վ էր մյուսի հեղինակը («Երեսմյուսյակի», «արգո ստորագրողը»), որի նամակը Փարիզ էր ուղարկել Մ. Նալբանդյանը:

Երկրորդ նամակի հեղինակը կամ մյուս ստորագրողը հավանաբար եղել է Ստեփան Նաղարչանը, որը նույնքան հարգանքով էր վերաբերվում Ստ. Ոսկանյանին, որքան և Նալբանդյանը: Դա կարելի է ենթադրել ոչ միայն «Արևմուտքի» մասին Նալբանդյանի այն կարծիքների հիման վրա, որոնք հրատարակվել են Ստ. Նաղարչանի խմբագրած «Հյուսիսսևիայում», այլ նաև 1859 թ. մայիսի 11-ի նրա նամակից՝ գրված էջմիածնի առաջագեմ միաբան, գիտնական, բանաստեղծ և թարգմանիչ Աբել վարդ. Մխիթարյանին: Նամակում խոսվում է Նալբանդյանի այն պատասխանի մասին, որ նա գրել է իր «Նամակ առ հրատարակողը» պամֆլետի առթիվ «Մեղու Հայաստանի» թերթի 1859 թ. մարտի 7-ի համարում հրապարակված Ստ. Պալասանյանի հոդվածի դեմ: Հաղորդելով, որ Նալբանդյանի այս «մեծապարունակ ճառը, համարյա թե ճիշդ թերթ տպած», դրաբնական նկատառումներով չի կարող հրատարակվել, Նաղարչանը գրել է. «Հեղինակը լինելով աշխույժ Թեմդի վերա լոնդոնումը, հետ ուղարկեցի նոռան յուր գրվածը, խնդրելով տպել նորան «Արևմուտք» օրագրի մեջ, որ Փարիզումը հրատարակվում է պ. Ոսկանյանի ձեռքով: Այդ օրագրի մարտ ամսի համարը կուղարկեմ Ձեզ շուտով Թիֆլիզի վերայով, ուր կարող եք տեսնել մեր պատմելի Այվազյանի բոլոր դարանագործության հանդեսը»²⁹, և իմաստասիրել իսկույն, որ այդ մարդը մի հին փորձառու զինվոր է

²⁸ Նույն տեղում, 15 դեկտեմբերի 1859, № 24, էջ 185—186:

²⁹ Նկատի ունի Ստ. Ոսկանյանի այն հոդվածը, որտեղ մերկացվում է Գ. Այվազովսկին՝ (հիշեցնենք, որ Մ. Նալբանդյանը 1859 թ. ապրիլի 23-ի նամակով Փարիզից Գր. Մալթիկյանին հայտնում է, որ ինքը խնդրել է «Արևմուտքի» հրատարակչին հանդեսից «ուղարկել մի քանի օրինակ պ. Նաղարչանցին»):

պապական խավարի դրոշակի տակ. և նորա արարքը ընդդեմ մեր են, միայն շարունակություն նույն ընթացքի, որ նա ունեցել է Փարիզի մեջ հայերի հետ...»³⁰:

Ա. Մխիթարյանին ուղղված հաջորդ՝ 1859 թ. մայիսի 27-ի նամակում նա-
զարյանը, հույս ունենալով, որ Նալբանդյանի հոգվածը կհրատարակվի «Ա-
րևմուտքում», գրել է. «Հույս ունեմ, որ նա իր գեղեցիկ և զորավոր ճառը շու-
տով կտպե մի այլ տեղ, և մենք կկարդանք դորան ուր և իցե տպագրած: Այ-
բանը դրեցի Միքայելի հոգու վերա»³¹: Բայց «Արևմուտքի» էջերում Նալբանդ-
յանի այդ հոգվածը ևս չի երևացել և նրա ճակատագիրն անհայտ է:

Այդ նամակագրությունից ականուռ է, որ Ստ. Նազարյանը և Մ. Նալբանդ-
յանը «Արևմուտքի» և նրա խմբագրի նկատմամբ համակարծիք էին, ուստի և շատ հավանական է, որ «Արևմուտքի» խմբագրությանն ուղարկված «բողոքի»
հեղինակներից մեկը հենց Ստ. Նազարյանն էր:

Ստ. Ոսկանյանի և Մ. Նալբանդյանի հայացքներում շատ ընդհանրու-
թյուններ կան գրականության ու արվեստի, մասնավորապես գրականության
զարգացման և ընթերցողների դեղագիտական դաստիարակության գործում
քննադատության դերի ու նշանակության, թատրոնի՝ որպես արվեստի մե-
նից դեմոկրատական տեսակի հասարակական կոչման հարցերում: Զուգադի-
պում էին նրանց գնահատականները արևմտաեվրոպական նշանավոր գրող-
ներին՝ Շեքսպիր, Վոլտեր, Ռուսո, Մոլիեր, Գյոթե, Զյուգո, Բերանսեն, էժ. Սյու-
և ուրիշներ:

Ոսկանյանը և Նալբանդյանը հայ առաջին գրաքննադատներն էին: Դեռևս
«Արևելք» հանդեսում հրատարակած «Դատական» հոդվածում Ստ. Ոսկան-
յանը, խոսելով իր ժամանակի գրաքննադատության անբավարար վիճակի մա-
սին, գրել է. «Այլ որքան որ դատականը մեր ազգին մեջ չի մտնա, արմատ չի
գտնե, չի մշակվի, մեր ազգը ո՛չ առաջ երթալիք ունի և ո՛չ տոհմային գրագի-
տության մը տեր ըլլալու է երբեք. անոր համար կտարակուսի կամ և հրաժա-
րելու տեղ՝ հետին կոչում մը կընե իր ազգայիններու, որ քիչ մը ուշադրին և
անձնական ամուլ կիրքերը մոռնան»³²: Երեք տարի անցնելուց հետո Մ. Նալ-
բանդյանը նորաստեղծ «Հյուսիսափայլի» անդրանիկ համարում հանդես գա-
լով «Կրիտիկա. Հանդես նոր հայախոսության» հոդվածով, նույն զաղափարը
կարտահայտի՝ ազգային գրաքննադատություն ստեղծելու անհրաժեշտության
և այն ստահող կարծիքի մասին, որ տիրում է ոմանց մոտ քննադատության
հասկացության շուրջը՝ որպես անպատվության ու հայհույանքի և այլն³³: «Այն
ազգը, — գրել է նա, — որ չունի կրիտիկա, չունի և մատենագրություն. պատ-
ճառ, մատենագրություն առանց կրիտիկայի, միևնույն է, ինչպես մարմին ա-
ռանց հոգու. իսկ այն ազգը, որ չունի մատենագրություն, ասել է թե չունի և
բանականություն, որովհետև մատենագրությունը այլ բան չէ, եթե ո՛չ բանա-
կանության արձանագրություն» (հ. 2, էջ 177):

Նշանակալից է, որ Ստ. Ոսկանյանը և Մ. Նալբանդյանը մամուլում առա-
ջինն են արձագանքել ի. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի հրատարակու-
թյանը (1858): Ոսկանյանն Աբովյանի վեպին նվիրված ծավալուն հոդվածով
հանդես եկավ «Արևմուտքում» (1859, № 6, 7, 10), իսկ Նալբանդյանը՝ «Հյու-
սիսափայլ» ամսագրում (1859, № 9)՝ իր «Մեռելահարցուկ» վեպի ծանոթա-
գրություններում: Ամբողջությամբ վերցրած նրանց վերաբերմունքն Աբովյանի
նկատմամբ համընկնում է, բայց էական տարբերություն կա «Վերք Հայաստ-
անի» և «Մեռելահարցուկի» միջև:

30 Ս տ ե վ ա ն ո ս Ն ա զ ա ր յ ա ն. Նամականի, տերստը կազմեց, ծանոթադրեց և առաջաբա-
նը գրեց Ռ. Նանումյանը. Երևան, 1969, էջ 207—208:

31 Նույն տեղում, էջ 210:

32 «Արևելք». 10 նոյեմբերի 1855, № 10, էջ 297:

33 Ի տարբերություն Ոսկանյանի, Նալբանդյանը գործածել է «Կրիտիկա» արտահայտությունը, որ փոխ է առել ռուսական գրականությունից ու գրաքննադատությունից (տե՛ս С. Д а р о н я н. Указ. соч., с. 121):

«...անի» նրանց գնահատության հարցում: Ընդունելով գրողի հաջողությունը ժողովրդական կյանքի ճշմարտացի պատկերման գործում, Ոսկանյանը, սակայն, չկարողացավ ըստ արժանվույն գնահատել «Վերք Հայաստանի» վեպի ազդեցիկը և գեղարվեստական առանձնահատկությունները՝ վեպը քննելով առանց հաշտորդականության մակարդակը նկատի ունենալու: Նալբանդյանը կտրուկ կերպով առարկեց նրա պնդումը, թե իբրև «անհնարին է այս գիրքը դատել և վրոպական կանոնով, վասնդի, ինչպես ըսինք, ռամիկներու համար և ռամիկի ոճով գրված է այն և իբրև գրական շենք մը չընծայվիր մեր առջև»³⁴, Ոսկանյանին պատասխանելով, Նալբանդյանը գրել է. «Եթե Աբովյանի Վերք Հայաստանին ունի արժանավորություն, և եթե այդ արժանավորությունը կարելի է դնահատել, ապա ուրեմն միմիայն և վրոպական կանոնով, որ նայում է միշտ գործի խորհուրդին և թե հեղինակը մինչև որ աստիճան կարողացել էր հասկանալ և լուծանել յուր առջև դրած խնդիրը»:

Ի տարբերություն Ոսկանյանի, Նալբանդյանը Աբովյանի մեծ ծառայությունը համարում էր հենց այն, որ նրա վեպը գրված է «ռամիկներու համար և ռամիկի ոճով», այսինքն ժողովրդի կենդանի լեզվով: Եթե «եվրոպացի» Ոսկանյանին Աբովյանի լեզուն և ոճը «ռամիկական» էին թվում, ապա Նալբանդյանը դրանում տեսնում էր հաշտորդականության ապագա զարգացման երաշխիքը: Նա գրել է. «Այո՛, Աբովյանցը յուր բանաստեղծությանը չէ տվել այնպիսի ընթացք կամ վերջ, որ սովորական է եվրոպական բանաստեղծներին, չէ երևում նա որպես մի անհաս կազմած, այլ որպես մի հանդիսարան որոշորոշ սյուսերների, բայց դորա առաջը առել է նա մի ընդհանուր անուն տալով յուր աշխատությանը— Վերք Հայաստանի»: Ինչ վերաբերում է վեպի լեզվին, ապա Նալբանդյանը ընդունում էր, որ այն «շատ հաղթահարված է տեղական բարբառից... Բայց այս պատճառով անիրավություն կը լինի չընդունել այդ գրքի խորին արժանավորությունը,— որ է պատկերացնել ազգի կյանքը ազդի առաջը»:

Հատկանշական է, որ Ոսկանյանն ինքն իրեն հակասելով, այսուամենայնիվ, չկաշկանդվեց և մի տեղում Աբովյանի «Վերք Հայաստանին» համեմատեց «եվրոպական նմուշների» հետ, թեև տվյալ դեպքում մեծություններն անհամեմատելի էին: Նշելով հայ իրականության՝ Աբովյանի կերտած համայնապատկերի ճշմարտացիությունն ու կենսարարությունը, նա գրել է. «Կարգացողը կարծես թե Հայաստանի գլուղեբույս մեջ կփոխադրվի համարյա եղբայրներու պարզության, զոհ չբավորության, երբեմն ալ սոսկալի աղետներու մասնակից կըլլա: Տեղ-տեղ այնպիսի մանր և փափուկ նկարագրություններ կան, որ Պալգաթի կամ էռմեն Սյուրի գրածներեն վար չեն մնար և վիպաբանի թանկագին տաղանդ մը կհայտնեն»³⁵:

Դժվար չէ հասկանալ, թե ինչու Ոսկանյանը չկարողացավ գլուխ հանել այնպիսի մի գրական անցումային երևույթից, որպիսին Աբովյանի «Վերք Հայաստանին» էր, որի ժանրային ու ոճական առանձնահատկությունների շուրջը բանավեճն այսօր էլ շարունակվում է: Թեև Ոսկանյանի ու Նալբանդյանի միջև սկզբունքային տարածայնություններ չկային, սակայն գեղագիտական պրոբլեմների, Աբովյանի վեպի գնահատության շուրջը, անկասկած, գրսեորվել է փարիզյի «հայ-տարագրի» կտրվածությունը հայրենի ազգային հողից: Դասափարակված ու կրթված լինելով առավել զարգացած արևմտաեվրոպական, մասնավորապես ֆրանսիական գրականության հիմքի վրա, Ոսկանյանը, բռնականաբար, ելակետ ունեւ, ինչպես ինքն է արտահայտվել, «եվրոպական կանոնները», որի դեմ էլ առարկում էր Նալբանդյանը՝ «Վերք Հայաստանին» դիտարկելով ազգային դրական պրոցեսի կոնտեքստում, վեպը քննելով նրա իսկ ներքին օրինաչափություններով, նրան չպարտագրելով այն, ինչ չկար նրանում, այսինքն՝ ելնելով իրական գրաքննադատության սկզբունքներից: Եվ, այդուհանդերձ, նա բարյացակամ ստնով էր բանավիճում Ոսկանյանի հետ՝ իր դի-

³⁴ «Արևմուտք», 1 ապրիլի 1859, № 7, էջ 55.

³⁵ Նույն տեղում:

տողութիւններն ավարտելով այսպէս. «Առհասարակ շնորհակալութիւն Աւելմութիւն. շատ բարեխղճութեամբ կատարել է յուր պարտականութիւնը, և մեռարած ծանոթութիւնը չեն պակասեցնում նորա հողվածի արժանավորութիւնը» (հ. 1, էջ 311—313): Ավելացնենք՝ Ոսկանյանն առաջինն է վերլուծել «Վերք Հայաստանի» վեպը և այդ դեպքում չլ անխուսափելի էին որոշ բացթողումներ ու վրիպումներ:

Ֆրանսիական գրողներից Ոսկանյանը հատկապէս տարված էր Պիեր-Ժան Բերանժեով ու բարձր էր գնահատում նրան: Ֆրանսիայի ժողովրդական մեծ բանաստեղծի մահվանից երկու տարի անց նա հատուկ հողված է գրել՝ «Պերանժե», որտեղ նկատում է, որ «իրմէ առաջ մեկը չէր համարձակեր այս կերպով վեհ տեսիլներու արձագանք ըլլալ և բաղմոթյան սիրտը արծարծել ազատութեան սիրով, որ մարդերու և ազգերու առաջին և վերջին պարտքն է...»³¹: Ոսկանյանի այս հիանալի տողերից մի սարի առաջ «Հյուսիսափայլում» նալբանդանը հրատարակեց Բերանժեի երգերից իր կատարած մի քանի թարգմանութիւնները՝ «Վայր ընկնող աստղեր», «Աղբաւ կիւ», «Մեծ մայր»:

Ստ. Ոսկանյանը և Մ. Նալբանդանը կրթութեամբ էին ընդունում Արևմտյան եվրոպայում տեղի ունեցող քաղաքական իրադարձութիւնները: Փալիդից, 1859 թ. սեպտեմբերի 4 (16)-ին գրած «Նամակ հրատարակողին» հողվածում («Հյուսիսափայլ», 1859, № 10) Նալբանդանը («Ծատուր Պողոսյանց» ծաւկանունով) արտահայտեց իր կարծիքը օգոստոսի 16-ին Նապոլեոն III-ի հռչակած ամնիստիայի՝ քաղաքական վտարանդիներին ներում շնորհելու վերաբերյալ: Նալբանդանն ատելութեամբ է արտահայտվել դավադիր-միտայեայի մասին, որ դավաճանութեան ու բռնութեան գնով 1851 թ. դեկտեմբերի 2-ին Ֆրանսիական Հանրապետութեան գլուխ կանգնեց: Նա ցասումով նշավակեց ֆրանսիական երկուտ բուրժուազիային, որը 1859 թ. օգոստոսի 15-ին ցնծութեամբ դիմավորեց Իտալիայից վերադարձող Նապոլեոն III-ին՝ այնտեղ Զ. Գարիբալդիի գլխավորութեամբ ծավալված ազգային-ազատագրական պայքարի ճնշման մասնակցին: Նալբանդանը միաժամանակ հիացմունքով է վերաբերվել ֆրանսիական քաղաքական «աքսորականներին», որոնք լսել անդամ չէին ուղում բռնակալի հրովարտակի մասին: Նրանց շարքում Նալբանդանը հիշատակեց նաև գրող-դեմոկրատ և հանրապետական Վիկտոր Զյուզյին, որը 1851 թ. դեկտեմբերի 2-ի հեղաշրջումից հետո Բեռլին էր հայրենիքը և վճռաբար հանդես էր գալիս քաղաքական բախտախնդրի հաստատած վարչակարգի դեմ (հ. 2, էջ 363—364):

Վ. Հյուզոյի ճակատագիրն է վիճակվել նաև Ստ. Ոսկանյանին: Ինչպէս հայտնի է, հակակառավարական ցույցին մասնակցելու համար (1849 թ. հունիս) նա նետվել է բանտ, որտեղ մնացել է մոտ երկու ամիս, իսկ 1852-ին ստիպված էր թողնել Ֆրանսիան և Փարիզ է վերադարձել ընդհանուր ամնիստիայից հետո՝ 1855 թ.: Այնպէս որ, երբ Նալբանդանը որում էր Վ. Հյուզոյի ճակատագրի մասին, նկատի ուներ նաև Ոսկանյանին վիճակված հալածանքը:

Քաղաքական վտարանդի էր նաև ֆրանսիական ականավոր գրող Էժեն Սյուն, որի ստեղծագործութիւնը գտնվում էր երկու հրապարակախոսների՝ Ոսկանյանի ու Նալբանդանի ուշադրութեան ոլորտում: Սյուն անունն այն տարիներին բավականաչափ լայնորեն հայտնի էր և ժողովրդայնութիւն էր վայելում: «Փարիզի դադունիքը» և «Թափառական հրեա» նրա բաղմահատոր վեպերը թարգմանվել էին շատ լեզուներով: «Փարիզի դադունիքը» վեպը Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի «Սուրբ ընտանիք» աշխատութիւնում (1845) մանրամասն քննադատական վերլուծութեան է ենթարկվել:

Էժ. Սյունի ստեղծագործութեան ուժեղ կողմերը մասնավորապէս արտահայտվել են «Թափառական հրեա» հակակղերական վեպում, որն արժանացել է Ոսկանյանի ու Նալբանդանի հատուկ ուշադրութեան: 1853—1854 թթ. լինելով Կ. Պոլսում և Զմյուռնիայում, Ոսկանյանը ոչ միայն հրատարակել է հա-

36 Նույն տեղում, 15 հունվարի 1859, № 2, էջ 13—15:

Հակադերական իր երկու պամֆլետները, այլև ձեռնամուխ լինելով «Թափառական Հրեայի» թարգմանությանը, լույս է ընծայել վեպի առաջին մասը։ Հրա-տարակչի հետ առաջացած տառաձայնության հետևանքով Ստ. Ոսկանյանը հրաժարվեց «Թափառական Հրեայի» շարունակության տպագրությունից, իսկ հետագայում՝ 1859-ին նույնիսկ հրապարակայնորեն ազդարարեց, որ հրա-տարակչի միջամտության հետևանքով «Թարգմանության առաջին մասը չունի այն դրոշմը, դոր ջանք ըրինք զնեւ հոն մեր հայերենով»³⁷։

Մի քանի տարի հետո՝ հենց հեղինակի մահվան թվականին, Մ. Նալբանդյանը նույնպես ձեռնամուխ եղավ «Թափառական Հրեայի» թարգմանությանը և կարողացավ հրատարակել վեպի դարձյալ առաջին մասը (1857)՝ այն ուղեկցելով հատուկ առաջաբանով, ինչպես և ծավալուն հավելվածով («Հիսուսյանը»)՝ ուղղված ճիղմիտների դեմ³⁸։ Բնավ պատահական չէ, որ «Արևմուտքի» 1859 թ. 21—22-րդ համարներում սրտատպում է «Թափառական Հրեայի» Նալբանդյանի առաջաբանն ամբողջությամբ։ Թե՛ Ոսկանյանը և թե՛ Նալբանդյանը Սյուրի վեպը, ուր բովանդակությունն ուղղված է կաթոլիկական ռեակցիայի դեմ, օգտագործեցին Մխիթարյանների պապական զաղափարախոսության իրենց սուր քննադատության ընթացքում։ Իր վերոհիշյալ պամֆլետները Ոսկանյանն ամբողջապես ուղղել է Մխիթարյանների պաշտոնական օրգանների՝ «Բաղմավեպի» և «Եվրոպայի» պապական քարոզների ու նպատակադրումների դեմ, ձաղկել է Մխիթարյան վանականներին, իսկ Նալբանդյանը նույն ելակետով դիմելով էժ. Սյուրի վեպին, նրան կցած առաջաբանում ուղղակի գրել է. «...եթե մեր Մխիթարյան գերապատիվ հարր չեն կամեցել այս բանը հալերեն թարգմանել և տպել, պատճառը կարոտություն չունի մեկնության»³⁹։ Եվ ի՞նչ Սյուր, մարդկության բարեկամ պարոնը, այս աշխատության մեջ նկարագրում է հիսուսյան աբեղաների անբրիստոնյա և բարբարոս վարքը ու բարորդ Մխիթարյան գերապատիվ հարր ինքյանը ևս կրոնակից և ջատագով լինելով հյուսիսյաններին հավանական և շատ բնական է, որ նոցա ձեռք չէր համարձակվելու այնպիսի գործ կատարել, մանավանդ, որ տեղ պապը նրդովի է այս աշխատության հեղինակը և կառողացողը, ուրեմն, և թարգմանողը» (հ. 2, էջ 78, 80)։

Պապական ռեակցիան, իրոք, հետապնդել է «Թափառական Հրեայի» հեղինակին։ Ֆրանսիայում տեղի ունեցած հեղաշրջումից հետո (2 դեկտեմբերի 1851 թ.) էժ. Սյուրն ինքնակամ հեռացավ երկրից (Սափույա)։ Տարադրությունից նա դրեց «Նամակ կաթոլիկական ռեակցիայի մասին» և «Ֆրանսիան միապետության մասնակաշրջանում» պամֆլետները, որոնցում կոչ էր անում տապալել բոլոր կառավարությունները և ստեղծել համընդհանուր հանրապետություն...

Եվ ահա, հակառակ ամեն արգելքի ու հայածանքի, որին ենթարկում էր ռեակցիան էժ. Սյուրին, Ստ. Ոսկանյանը և Մ. Նալբանդյանը թարգմանում են նրա վեպը, գրում առաջաբան, հանդես են բերում համանման վերաբերմունք, նույնիսկ գործակցում՝ նպատակ ունենալով «Թափառական Հրեան» մասսայականացնել հայ իրականության մեջ՝ ի նպաստ հակակղերական ու հակապապական պայքարի։

Տարբեր ճակատագրեր են ունեցել Ստ. Ոսկանյանը և Մ. Նալբանդյանը։ Առաջինը ակտիվորեն մասնակցել է 1848 թ. ֆրանսիական հեղափոխությանը,

³⁷ Նույն տեղում. 1 սեպտեմբերի 1859, № 17, էջ 136։

³⁸ Ինչպես վերջերս պարզվեց, դա վերամշակված թարգմանություն է ռուսերենից՝ «Օտեչեստվեննի գոլոբիսի» ամսագրում 1844 թ. տպագրված հոդվածի (տե՛ս Ի. Ն. Կոնյակ, Ստեփանոս Նալբանդյան, Երևան, 1978, էջ 283)։

³⁹ Հատկանշական է, որ Մխիթարյանների վենետիկյան օրգանը՝ «Բաղմավեպը», դեռևս 1846 թ. «Թափառական Հրեային» նվիրված գրախոսականում վեպը բնութագրել է որպես «վնասակար» դիրք (տե՛ս Ա. Բ. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության հ. 2, Երևան, 1960, էջ 243)։

մարտնչել է Փարիզի բարիկադների վրա, ճաշակել է տարագրության դառնությունը: Մյուսը հանգեց հեղափոխական դեմոկրատիային, հարեց 1850—60-ական թթ. Ռուսաստանում ծավալված աղաքագրական շարժման ակտիվ գործիչներին՝ երկրում հասունացող հեղափոխական իրադրության պայմաններում: Ինչպես Ոսկանյանը, նախնականը նույնպես կրեց բանտի և արտոնի ամբողջ ծանրությունը: Նրանք հանդիպել ու մտերմացել են հասարակական և գրական իրենց գործունեության ծաղկման ժամանակամիջոցին, որը վերջին հաշվով պայմանավորել է նրանց դերը դեմոկրատական նամբարում: Ճիշտ է, Ոսկանյանի գաղափարական աշխարհայեցողությունը 60-ական թթ. վերջում էական էվոլյուցիա ապրեց դեպի լիբերալիզմ, բայց ակնհայտ է, որ մեղ ալստեղ հետաքրքրող ժամանակաշրջանում Ոսկանյանը հանդիսացավ հայ դեմոկրատական հոսանքի ականավոր ներկայացուցիչներից մեկը:

М. НАЛБАНДЯН И СТ. ВОСКАНЯН

Доктор филол. наук С. К. ДАРОНЯН

(Резюме)

Вопрос взаимоотношений Микаэла Налбандяна и Степана Восканяна (Воскана) давно занимает исследователей. Однако в прошлом делались попытки противопоставления их друг другу, в результате чего не прояснялось главное—что же объединяло, а что и разъединяло двух видных армянских публицистов середины XIX в. В статье прослеживается идейная общность Налбандяна и Восканяна в их борьбе с феодално-клерикальной идеологией за просвещение народа и национальный прогресс. В этой борьбе п московский журнал «Юсисапайл» («Северное сияние», 1858—1864), главным сотрудником которого был Налбандян, и парижский журнал «Арсвмутк» («Запад», 1859, 1864—1865), редактируемый Восканяном, стояли на единых демократических позициях. Оба публициста в борьбе с общим идейным противником пользовались грозным оружием сатиры. Они остро воспринимали политические события в Западной Европе, поддерживали национально-освободительное движение угнетенных народов, выступали с резкой критикой католической реакции. Восканян и Налбандян стали первыми армянскими профессиональными критиками. Много общего у них было в эстетических взглядах, в оценках явлений литературы и искусства.

По-разному сложились судьбы Восканяна и Налбандяна. Первый был активным участником французской революции 1848 г., познал горечь изгнания. Другой пришел к революционному демократизму, примкнул к активным деятелям освободительного движения в России, испытал на себе все тяготы тюрем и ссылки. Они сблизились в пору расцвета их литературно-общественной деятельности (в статье обосновывается ранее выдвинутая гипотеза об их знакомстве еще в 1857 г.). Правда, идейные воззрения Восканяна в конце 60-х гг. претерпели эволюцию в сторону либерализма, однако бесспорно, что в 1850—1860-х гг. он был одним из выдающихся представителей демократического течения.